

ԻՄ ԶԱՆԱԳԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Տպատարութիւններ)

ԳԼՈՒԽ Ա

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊՈՒՐՄ ԵՒ ԱՐԱՔՈՒ ԱՓԵՐՈՒՄ

Վաղուց ի վեր փափագում էի մի ուղեւորութիւն կատարել զէպ ի մեզական Պարսկաստանը, այնտեղի Պարսկա-հայոց ազգային-հասարակական կեանքի հետ միասին՝ նաև Պարսից հասարակական-քաղաքական կեանքը ուսումնասիրելու նպատակով: Բաղդադ վերջապէս անակնունչի կերպով իմ ծրագրած այդ վաղեմի մտադրութիւնը իրագործելու սլըսակեց, ուսուցչական պաշտօնով հրաւիրուած լինելով հայ լեզուի և բնագիտական դասւանդութեան համար Խոսրովաշէն հին պատմական Դաւրէժը, որ Պարսկաստանի կենդրոնական ամենանշանաւոր և բազմամարդ քաղաքներից մէկն է համարվում:

Եւ ահա մտաբերում եմ այն օրը, երբ ճանապարհորդութեան համար հարկաւոր պատարասութիւններ էի տեսնում « վերջին հրածեշտ » առաւ իմ ծննդավայր զիւզին: Վերջին հրածեշտ, — ճրգան ծանր էին հնչվում այդ բառերը իմ ականջին: Թողնել տուն, տեղ, հայրենի օջախ, ծաղկափթիթ լեռներ ու ձորեր, մանկութեանս զբօսանքի սրբազան վայրեր, հեռանալ զաւակասնունդ ծնողներից, մեծերիմենից ու բարեկամներից, ձգել երեսի վրայ այն նուիրական հողը, որի հետ արմատապէս միշտ կապուած է եղել մարդ՝ կեանքի մեծ մասը նրան պարտական ունենալով, — ընկնել, թափառել օտար երկրներ, ամեն բանով օտար պայմանների, անծանօթ շրջանների մէջ, օտար երկնքի, օտար աստղի տակ... Ինչ թուում էր դրանից աւելի մեծ հարուած, դրանից աւելի մեծ

անբազկութիւն չէր կարելի ինչ համար, որովհետև հայրենիքից դուրս ոչ մի տեղ աւանդական զնացած չը լինելով՝ սուրբ էի միշտ հայրենեաց անուշ հողի վրա ապրել... Ժանք էր, այո՛, և շատ ծանր հայրենիքից բաժանման բոպէն, զրկուել հայրենիքից, ըստ իս, նշանակում է զրկուել և բնական խնդրից: « Լաւ է հայրենեաց փուշն ու տատակ, քան օտարի նուշը »: Քանի մտածում էի ու երևակայում, այնքան աւելի զգալի էր լինում հեռաւոր երկիրներում պահպանական սիրտը, որից — դիտել — կը զգացուէր ուղղապէս մի ֆիզիքական ցաւ, կրծքի ծալքերում մի անբացատրելի դատարկութիւն տիրելով: Շրջապատն այնտեղ կ'երևայ լճաւ, ամայի անապատ, մարդիկ իրանց կեանքով և ամեն ինչ « հոյն օտար, շուրն օտար », — և ինչքան ամենամեղամաղձ, տիրապէմ սպասողական օրեր ինչ համար: Չը հեռացած հայրենիքից տակաւին՝ կարծես տիրել էր ինչ յուսահատական տիրութիւն. սրբան աշխատում էի ջրել այդ, հանգստացնել սիրտս շուրջ պաշարող սանձող մտքերից, բայց ի զուր... Երևակայում էի, թէ օտարութեան մէջ այն տանիք, ինչ ուր կը շրջապատի քեզ, պիտի լինի աւելորդ, որովհետև ուրախութեան կամ միտմարտութեան լոյս — պայծառութիւն չի զարթեցնել քո սրտում, այլ անցնելի քաղցր պատմական յիշատակներ երբեմն միայն կը վերադարձնեն մտքիդ մէջ: Եւ ինչ « կապ » կարող է լինել քո և օտարութեան մէջ, ի հարկի ոչինչ, մանաւանդ աւելի ցաւալի, աւելի կենսամաշ և աւելի ախտը է այն, երբ մտաբերում ես, որ կայ իրօք մի երկիր, մի խաղաղ՝ համեստ անկիւն, ուր դու օտար չես եղել, այլ քո սրտին շատ մօտիկ, ուր վերջապէս անց ես կացրել օրօրոցի հասակից քո մանկութեան ոսկեփառ կեանքն ու ժամեր, ուր անհոգ թռչնիկի պէս խնայացնել ես ու բերկրացրել՝ հակառակ պահպանութեան երկրում կրելիք վշտերի և տխրութեան խորհրդածութիւններին: Ահա այդ և նման տանջող մտքերն են, որ զայն ուրոյն ուրոյն բաղնիք փորձում քաղաքաբարկ խոհական դժուր, և սիրտդ բարձր ու ցածր անելով անհանգստացնում, ալեկոծում: Նրանք, այդ մտքերի մի շարք

զառնութիւնները այդ ժամին քեզ ամբողջապէս տիրում են : Ի՞նչ էք կարծում, գտարկ բառեր են « հայրենիք , ազգակիցներ » , ուրոնց սիրելը և որոնց պաշտելը մի բնական զգացմունք է , այո՛ , բնական : Այդ բնական զգացմունքը բնութեան ձեռքով այնպէս է վրդովուած ու խորը տպաւորուած մեր սրտում , որ նրան այլապէս և ոչ մի հնարով չնշել՝ դուրս խլել անկարելի է , զրա համար պէտք է միանգամայն արմատախիլ անել մարդկային սիրտը հիմնովին և ամբողջովին : Ո՛րքան օտարութեան մէջ ապրէի լաւ , բայց այնու ամենայնիւ վարձեալ դարհուրելի միայքը տանջում , տառապում է ինձ , երբ մարդ զգում է թէ կեանքի համար ինքը զէրօ է , մի ոչնչութիւն : Թէ է ամեն մի բանական մարդու համար սպանող միտք է զա , սակայն մի ինչ որ վերածնութեան ու կենդանութեան ներշնչում , մի ինչ որ յուսոյ սրբազան կայծ պիտում , բռնկում է քօ ներսը , երբ մանաւանդ կատարեալ զգացումով խորհրդածում են , թէ կայ մի կեանք , մի լաւագոյն վիճակ , որի համար դու զէրօ չես , այլ ունիս գոյութիւն , կայ մի սեղ , ուր թէ կամք , եռանդ , ցանկութիւն ունենաս , կարող ես օգտակար լինել հարազատ ազգի և հայրենիքի ու քո բարօրութեան համար . մի սեղ , ուր ամեն բան հարազատ է քեզ , ծանօթ է քօ սրտին շատ մօտն — այն սեղ որ քո անզուգական , անմոտանայի հայրենիքն է , որի հաստատուն հողի վրա գործելու ասպարէզը զգալի պահանջ է , բարոյական պարտականութիւն է , անհրաժեշտ պայման ու խիստ արդիւնաւոր արգասաւարութիւն իւրաքանչիւր անհատին : « Մեր հայրենիք » , « մեր երկիր » բառերի բուն իմաստը աւելի զգալի է գառնում օտարութեան վայրերում , այն ժամանակ միայն զգում ես , որ թողնելով յետեկից հայրենի անակը , բնակասնունդ հողը , մայրենի սրբաւայրը , ծրա հովասուն , այժմ դեռ ձեռնապատ լեռ , գաշա ու անտառ , կանաչազարդ այգիներն ու պարտէզները , կարկաչասահ վտակները , գետերը և սառնորակ աղբիւրները , մի խառնով այն ամենը , ինչ որ քեզ համար թանկ է եղել և նուիրական մանկութեան օրերից սկսեալ , — այո՛ , ըզ-

գում ես , որ թողնելով զրանց՝ թողել ես և կեանքդ , այն՝ որով շնչում էիր , այն՝ որով ապրում էիր դու . իսկ այնտեղ՝ օտարութեան մէջ՝ ի՞նչ է սպասում քեզ , ուր ոչ թէ ինքդ ես ապրելու , այլ ատուերդ միայն — ուրիշ ոչինչ : Այսպէս բարոյական տանջուելով հետզհետէ ինձ շրջապատող մտքերի վառնութիւններով՝ անհամբեր սպասում էի ճանապարհ ընկնելու որոշուած օրին : Թէ և մի կողմից տխուր էի , որ առաջին անգամ պիտի հեռանայի հայրենիքից օտար աշխարհ , թերեւս անտուն և անկապակից , բայց և միւս կողմից ուրախ էի , որ հայրենիքի գիւղական նեղ շրջափակից դուրս գալով՝ ճանապարհորդութեան մէջ պիտի առիթ ունենայի ծանօթանալու Պարսկաստանի նման մի երկրի մահմէտական ֆանատիկոս ժողովրդի և պարսկահայ համայնքի առտնին — անսեռական կեանքի այլ և այլ երևոյթների , ու տեղական իշխող իրերի և հանգամանքների հետ : Պարսկաստանը այնպիսի մի երկիր է , որի մօտին ուստայայերս իսկապէս շատ քիչ և թերի տեղեկութիւններ ունիմք : Ուստի Պարսկաստան եզոզ թղթակից զրականագէտների վրա առանձնապէս շնորհակալութեան արժանի բարոյական պարտիք կայ , այդ սակաւ և թերի տեղեկութիւնները կարելոյն չափ և հետզհետէ լրացնելու . զրոգ թղթակցի գործը այն պիտի լինի զխաւորապէս , որ նա հետեւի ընթացիկ կեանքի երևոյթներին , և որչան կարելի է փաստեր շատ հաղորդէ այդ երևոյթների վրա : Ես կ'աշխատեմ , միայն ըստ չափու կարողութեան , զրոգ թղթակցի այդ պահանջներին բաւականութիւն տալ իմ ճանապարհորդական յիշողութիւններով , տպաւորութիւններով : Որպէս ներել է , որ ես ամենին մտադրութիւն չունիմ կանգ առնել ատօրեայ կեանքում պատահական անցքերի նկարագրութեան , մանաւանդ և այդ անցքերի մասին անմիջապէս և շուտափոյթ տեղեկութիւնների վրա , որոնց հաղորդելը իր ժամանակին լրագրական նկատումով մեծ կարեւորութիւն ունի . իսկ « Բաղրամալիկ » նրման մի լուրջ ամսագրի համար նրա բանասէր ու հետաքրքիր ընթերցող հասարակութեան՝ ես կ'աշխատեմ տալ Պարսկաստանում

ապրող ժողովրդական կեանքի զանազան երևոյթներ, պարզ ոճով նկարագրող յօդուածներ :

Հասաւ վերջապէս ճանապարհորդութեան օրը : Յիշում եմ, այժմ, առաւօտ էր, դարեւնային լուսալայնածառ առուտոներից մէկը : Արեւի ճմլող ճառագայթներից յաղթահարուած ձիւնը վերացել էր դաշտավայրերից : Բնութիւնը ձմրան խորունկ քնից արթնացել էր, բերկրապատար, թարմ ու եռուն կեանք էր սփռել ամեն կողմ, և մանկական գեղածիծաղ ժպիտով՝ մեղմիկ ծփում էր ծաղիկների, կանաչների մէջ : Ի՛նչքան գեղեցիկ էր այն առաւօտը : Ի՛նչ զգացմունքներ, ի՛նչ սպաւորութիւններ սսես, որ չը զարթեցան յիշողութեանս մէջ անշնչելի : Այն ժամանակ, շատ լաւ յիշում եմ, թէ ինչպէս մեր հայրենի տան առաջ տարածուած պարտէզի բալթի տնիքները ծաղկել էին, մեր այգիների ծիրանի ծառերն էլ կիսաբաց կոկոնների սաւկից ծիծղում էին համեստօրար : Նրանցից տարածվում էր օդի մէջ ամեն տեղ ամբողջական զրախի կնգրուկանման անուշահոտութիւն : Վարդեր, մանիշակներ, նարդիներ, նարդոսներ և հազարաւոր բազմերանց հոտաւետ ծաղիկներ փռուած, օրպէս մի կապտագոյն գեղեցիկ սփռոց, զհարի նրման փայլում էին խոտերի մէջ, գաշաբում և այլկներում : Ո՛րքան սքանչելի բուրմունքներ : Առաւօտեան երկնքից կենարար ցօղը իջել էր մարդագետիներում : Ամեն տեղ կեանք էր շնչում ու եռում, ամեն տեղ կենդանի շարժողութիւն : Օրը պայծառ էր, երկինքը ջիւղ՝ փայլում էր զբոխտար պէս կապտադեղին, օդը կենդանութիւն էր ստացել ճշուողիւն թռչունների անուշ ծրլոցներով, սրբառազա երգերով ու զայլայլիկներով : Փոքրիկ ճնճողները — ուրախ ծառերը՝ թռչկոտներով և ոստոսներով մէկ ծառից դէպ ի միւսը՝ վազորդեան կարմիր արշալոյսի—արեաբացի գէմ երգում էին « Ովսաննա », առոյգահասակ, խնկաւոտ զարնառ զալստեան համար, և առաւօտեան օրհնորեցն էին վերսկսում աշխարհի անեղծող ամենաբարձր թագաւորին : Նրանց հանդիպակաց լեռների վրա տեղ տեղ փայլում էր սպիտակ, մաքուր ձիւն : Ամեն

էլ գիճաւորում էին գարնանը մանկական ուրախ, պարզ ժպիտները դէմքերին, մի տեսակ բարեբար շնչով վերակենդանացած ձմրան սառնամանիքներից . . . Գարնանամուտ էր : Երկար կանգնած իմ հայրենի տան առաջ փռուած պարտէզի մուսքի մօտ՝ ակնապիշ, լռելեայն դիտում էի գարնանազարդ տեսքը բնութեան, հրաշալի այն տեսարանները, որոնք բնական էին ամենատիպիւր մարդուն անգամ՝ զմայլեցնել, ապշեցնել : Այդ միջոցում ի՛նչեր ասէ՞ք՝ որ մուրիցս չանցան, հազարաւոր խորհուրդներ ուրայն ուրոյն վերքերի ահապին խոցեր թողին սրտիս խորը յատակում : Հայրենեաց անտահման սէրը կաշկանկել էր ինձ, թէ և ուզում էի առաջ գնալ, բայց կարծես ոտներս թուլացած՝ կամ չէի՝ անզանդաբախ չէին ուզում : Վերջին հրաժեշտը — բաժանման րոպէն խոյոյն բացաւ փակ լեզուիս կապանքները, և հէնց որ ուզում էի թափել այնտեղ և եթ սրտիս մէջ, կրծքիս տակը վաղուց փայփայած զգացմունքների բուռն զեղմունքը, աչքերս արտասուքով լցուեցին : Այդ նկատեցին իմ ծնողները : — « Մի՛ գնա, որդի, առում են, Պարսկաստանում — իրանի հողում մարդու դուրս են կարում, աչք են հանում » : — « Պարսքը և պաշտօնը ստիպում են ինձ որ հեռանամ հայրենիքից : Ձեր ակնարկածները վերաբերում են յանցագործ գողերին, առաւելներին և մարդասպաններին, ի հարկէ չարը պատժի արժանի է : Ի՛նչ կ'ուզի լինի՝ ես գնալու եմ իմ վարժապետական պարտականութիւնը լրացնելու, ուրեմն դու՛ր է ձեր խոյրին ու աղանչը » :

Էս հաստատ մնացի վճռողականութեանս մէջ : Ոչ ծնողական և ոչ բարեկամական խորհուրդներ և աղբրսանքներ չը կարողացան յետս կասեցնել ինձ իմ մասպրութիւնից : Էս պատրաստուեցայ ամենքին վերջին «մնաս բարով » ասելու և ճանապարհ բնկնելու :

Իմ ծնողների ու բարեկամների հետ արտաստական համբուրուելուց յետոյ, արաւազալայ անապարեցի դէպ ի գիւղական փոքրիկ հանգստարան, որ գերեզմանաբաբերի տակ հանդում են մեր ազգականներից շատերը : Այնտեղ է և իմ վաղամեծիկ, կաթողին

մայր Մարթան, որի անմահ յիշատակը և ջամբաստանարար կաթոս սրբազան պարտաւորութիւն են զնուսմ ինձ վրա՝ որդիական խնամարարութեամբ ու երկխոսութեամբ ծնունդ չորեք նրա սուրբ շիրիմի մօտ և ջերմ համբուսելով զլեւի քարը՝ փոխանակ ջերմի։ Էս ծածուկ գիւղական քահանային տարել էի հետս վաղաթառամ մօրս զերեզմանը օրհնելու։ Դ՛նչքան զեղեցիկ խոսեր և ծաղիկներ էին կանայել նրա փոքրիկ, նեղ բնակարանի շուրջը... Նրա չորս կողմը թռչունները ուրախ ուրախ թռչկոտում էին և անհոգ ծրվելում... Ազգայականների միւս գիւրգմաններն էլ մէկ մէկ համբուրելով՝ տխուր սրտով հեռացայ այնտեղից զէպ ի իմ ճանապարհորդակից ընկերների մօտ, որ զիւղից մի քիչ զուտ, կառքով պատրաստ, սպասում էին անհամբեր իմ վերադարձին։ Նրանք թէև հարցաւոր եղան իմ այնքան ուշանալու պատճառն իմանալու, սակայն ես պատասխանեցի լուրձեմամբ։ Ինչպէս նորանք էլ նկատեցին, հայրենիքից հեռանալը աղկել, ծանրացել էր սրտին, և տխուր տպաւորութիւններով համակել։ Մենք նստեցինք կառքը, որ արագապէս սլացաւ առաջ։ Զգայուն սիրտս այդ ժամանակ մի տեսակ փղձկուեց, աչքերումս փայլեցին արտառուքի ցողանման բաթիկներ։ Վերջին անգամ մի սխտըր, բայց քաղցր հայեաճը նետեցի զէպ ի նազիկ «վաթմանը», սիրտս չը դիմացաւ, լալապին ձայնով բացաւ կանչեցի՝ ձեռքերս տարածելով օդի մէջ։ «Մնա՛ք բարով, ծնող—հայր, հանգստեալ մայրական գերեզման, ծերուկ սատ, հարազատ եղբայր, սիրասուն քոյր։ Մնա՛ք բարեաւ և զու, իմ կոթողին հայրենիք, իմ մանկութեանս քաղցրիկ օթնալի, կ'արժանանամ արդեօք հասնել նապաստակին, վստաստեալ մարմինս, վշտակիր հոգին, վերաւոր սիրտս՝ աստանակալան ու պանդխտական թափառում։ Ներից յետոյ՝ նորից և նորից գովացնել քո հովաասն շուքերով, կենդանարար օգով և կենսաբարդ հոտով, թէ՛ ընդհակառակն՝ փորձանքների ու ատապապանքների բովից անցնելով, պիտի զեղբուրկ հողին օտարութեան մէջ՝ այլ ևս անվերապարձ, հայրենիքից հեռու՝ կարօտակէզ աննշանքներն մէջ...» Հա-

ւատացէք, սիրելի ընթերցողներ, նոյն իսկ վառ զգացմունքների և օգեւորութեան կրակոտ աւանդների կենդանի թարգման բանաստեղծական մի ճարտար զրիչ կ'անգործանար իսկ նկարայարեւո սրտին այն զեղուն զգացմանց արտայայտութիւնները և ներքին աշխարհում կատարուող այն յոյզերը, որոնցով հրդեհեցաւ ու հակուեցաւ իմ ամբողջ էութիւնը հայրենիքից մեկնելու այդ ժամին։ Մինչդեռ տանջող մտքերով զբաղուած էի, յանկարծ կտաւ սլանի սուղոյը լուեց և նրա խաւստ ձայնը մաքիս թելը ընդհատեց, խանդարեց մտաւ ծողովանաւս շարունակութիւնը։ Ես հիւսձափուեցայ։ Կարծես այգիս առէկ շարէ ի շար անցնում էին հմայիլ անանց երազներ, կառքի մէջ նստիլը և ճանապարհ գնալը ես չէի զգում, այնքան էին մոտածմունքները պատշաճ ինձ։ Մթափուած կարծես քնից՝ նայեցի առաջ, ահա կտապալանի մարակր օդի մէջ շողաց և ուժգին կերպով զարնուեցաւ ձիանց մէջքին։ Վերջիններս առիւծ կարած՝ կառքը առան թողնել, թողնելով մեր յետեւ դաշտեր, գետեր, առուակներ և մինչ երկինք բարձրանող ամպանման փոշի... Կտաքը սլացաւ, ափսոս, ծննդավայր զիւղի վերջապէս անհետացաւ իմ աչքից։ Դեռ երեսում էր ինձ գիւղական կիսախրճիթ տների ծխնելոյզներէից հնազնետէ բարձրանող օդում տաւաթուած ծուխը։ Այգիս անտողութեան հարեզոնը պարփակելով մի հանդիպակաց լեռնաշղթայ, նա էլ կորաւ, ցնդուեց օդի մէջ, բայց ի գութ... մենք երեկոյեան զէմ հասանք արեւմտեան Սևախայ ճոխ և Նշանաւոր քաղաքներից մէկը, օրհնեալ թիֆլիսը, Կովկասի լուսաւորութեան կենդրոնը։ Փարթեալ նշովկայի ստորոտը, շրջապատուած լեռնաշղթաների հսկայական զաղաթներով, զաշառուած անսոյ խիստ ակնհայտ, կենդանազդի հովիտների մէջ։ Թէպէտ այդ կէս—սիրական և կէս—եւրոպական քաղաքի մէջ շատ ընդարձակ նիւթեր կային ուսումնասիրութեան, բայց թող ներուի ինձ, որ ես մտադրութիւն չունիմ այս անգամ թիֆլիսից ամենեւին բանքս յիշատակելու, վախճանայով բուն նիւթից մեզ հեռացնի։

Շարաշարեշի

ԳՐԻԳՐԻ ԲԱԼԱՍԵԱՆՑ